ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի խորհրդական Նարեկ Գրիգորյանի՝ 2019 թվականի հունիսի 20-ից 22-ը Ռուսաստանի Դաշնության Տյումեն քաղաքում կայացած ԱՊՀ անդամ-պետությունների շինարարության ոլորտում համագործակցության միջկառավարական խորհրդի հերթական 39-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝ Նարեկ Գրիգորյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի խորհրդական

3.Գործուղման վայրը և ժամկետը՝ Տյումեն (ՌուսաստանիԴաշնություն), 2019 թվականի հունիսի 20-ից 22-ը

4.Հրավիրող կողմը՝

ԱՊՀ անդամ-պետությունների շինարարության ոլորտում համագործակցության միջկառավարական խորհուրդ և Ռուսաստանի Դաշնության շինարարության և բնակարանային կոմունալ տնտեսության նախարարություն:

5.Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Նստաշրջանում ամփոփվեց կառույցի 2018-2019 թվականների աշխատանքները: Օրակարգում ներառված հիմնական հարցերից են եղել՝ 1994 թվականի սեպտեմբերի 9-ի ԱՊՀ անդամ-պետությունների շինարարության ոլորտում համագործակցության Համաձայնագրի որոշ հոդվածներում փոփոխությունների իրականացումը, շինարարության ոլորտում կոդավորման և դասակարգման միասնական համակարգին անցումը:

6. Քննարկված թեմաները՝

Խորհրդի նստաշրջանի քննարկման հիմնական թեմաներն էին՝ անդամ պետություններում քաղաքաշինության ոլորտում համատեղ ջանքերով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված աշխատանքների բարելավումը, էներգախնայող և էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների կիրառմամբ թաղամասերի կառուցումը, ինչպես նաև ԱՊՀ երկրների ոլորտային կառույցների համագործակցությունը շինարարության նորմատիվ բազայի զարգացման, սեյսմակայուն շինարարության նորմատիվ փաստաթղթերի

ներդաշնակեցման և գնագոյացման նոր մեթոդաբանության մշակման և այլ ուղղություններով:

7.Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝

- Խորհրդի նստաշրջանին ներկայացրել եմ ՀՀ քաղաքաշինական կադաստրի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքները
- ՀՀ քաղաքաշինական կադաստրի վարման նպատակով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը
- ՀՀ քաղաքաշինության բնագավառում նախատեսվող օրենսդրական բարեփոխումները և այն:

Հանդիպումներ են տեղի ունեցել Ռուսաստանի Դաշնության շինարարության և բնակարանային կոմունալ տնտեսության նախարար՝ Վլադիմիր Յակուշևի, Բելառուսի Հանրապետության ճարտարապետության և շինարարության ներկայացուցիչների, Ղազախստանի Հանրապետության քաղաքաշինության և բնակարանաշինության կոմիտեի նախագահ՝ Մարհաբաթ Ժայեմբետովի, ԱՊՀ անդամ-պետությունների շինարարության ոլորտում համագործակցության միջկառավարական խորհրդի գլխավոր քարտուղար՝ Ալեքսանդր Մյասնիկովի և այլոց հետ:

10. Գործուղվող- Նարեկ Գրիգորյան

11. Ստորագրությունը, ***ամսաթիվը – 27.06.2019 թվական***